



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 09 » 10 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000083

Ձեռնարկողը՝

«ԱՍՔՄԵԴ Դիզայն» ՍՊԸ

Ք. Երևան, Սայաթ-Նովա 25/2

Գործունեությունը՝

Հակոբ Կոջոյան թիվ 15 կրթահամալիրի շենքի
վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000083

< 09 > 10 2019թ.

Հակոբ Կոջոյան թիվ 15 կրթահամալիրի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ <<Ասքմեդ դիզայն>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Հակոբ Կոջոյան թիվ 15 կրթահամալիրի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման նախագիծն իրականացվելու է <<Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի>> շրջանակներում (ԴՍԱԲԾ)՝ Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ: Ծրագրի իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը /ՀՏՀ/։ Նախագծված տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում՝ Մաշտոցի պողոտա 2ա հասցեում: Կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 0.3605հա մակերես, որի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Հողամասի մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են՝ 1149.0-1150.0 մետրի սահմաններում:

Հ. Կոջոյանի անվան թիվ 15 կրթահամալիրի շենքն իրենից ներկայացնում է եռահարկ քարե կառույց /կառուցված 1937թ./, որը նախագծվել է որպես միջնակարգ դպրոց /Պ.Պրոշյանի անվան/: Գոյություն ունեցող կառույցի ծածկերը փայտյա են: Շենքի արտաքին պատի խորշում ամրացված է Հ. Կոջոյանի կիսանդրին, իսկ բակում, գլխավոր մուտքի մոտ պատվանդանի վրա տեղադրված է Պ. Պրոշյանի արձանը, դրանք մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը ապամոնտաժվելու և համապատասխան միջոցներով պահպանվելու են, այնուհետև վերականգնվելու են նույն տեղում:

Համաձայն նախագծի նախատեսվում է գոյություն ունեցող շենքի ճակատային մասի ուժեղացում/մնացած մասի քանդում և կրկին կառուցում, ինչպես նաև երկհարկանի կցակառույց նոր մասնաշենքի իրականացում: Դպրոցը նախատեսված է 12-ամյա ուսուցման, 570 աշակերտների համար:



Վերակառուցող մասնաշենքի առաջին հարկում տեղադրված կլինեն՝ նախասրահը, տարրական դպրոցի 8 դասարանները, բուֆետը, ուսուցչանոցը և սանհանգույցները, երկրորդ հարկում՝ 8 դասարաններ, ուսուցչանոցը, տնօրենի աշխատասենյակն ընդունարանով և սանհանգույցները: Երրորդ հարկում նախագծված են 8 դասարաններ, ֆիզիկայի և քիմիայի աշխատասենյակներ՝ լաբորատորիաներով, սանհանգույցներ:

Կից կառուցվող մասնաշենքն իրենից ներկայացնում է ուղղանկյուն շինություն՝ 20.60x15.90մ առանցքային չափերով: Մասնաշենքում նախատեսված են հետևյալ սենքերը, առաջին հարկում՝ նախատեսված է սպորտ դահլիճ, տղաների և աղջիկների հանդերձարաններ՝ սանհանգույցներով և ցնցուղարանով: Երկրորդ հարկում նախատեսված է հանդիսությունների դահլիճ, գույքի պահեստ, մեկ արվեստանոց և սանհանգույցներ, իսկ երրորդ հարկում՝ չորս արվեստանոցներ՝ քանդակի և դիզայնի ուսուցման համար, ինչպես նաև նախասրահ և պահեստ:

Կառույցում նախատեսված է հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ վերելակ, իսկ համապատասխան վայրերում՝ թեքահարթակներ: Հակահրդեհային նպատակներով գոյություն ունեցող մասնաշենքում նախատեսված են երկու լրացուցիչ աստիճանավանդակներ:

Կառույցի համար նախատեսված էլեկտրամատակարարումը, արտաքին և ներքին ջրամատակարարումը, գազամատակարարումը, կոյուղին, ինչպես նաև հակահրդեհային սնուցող ցանցերն իրականացվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքներով՝ համաձայն մատակարարող կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանների:

Մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար ջեռուցման աղբյուր կհանդիսանա տարածքում կառուցվող կաթսայատունը: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել 2 կաթսաներ՝ յուրաքանչյուրը 250կվտ ջերմային հզորությամբ: Կաթսայատան ծխնելույզի բարձրությունը նախատեսվել է 9 մ, իսկ տրամագիծը՝ 400 մմ: Շենքի արտաքին պատերի և վերևի ծածկի կոնստրուկցիաների ջերմամեկուսացման արդյունքում ջեռուցման ծախսը նախատեսվում է նվազեցնել շուրջ 40%-ով: Շենքում օդափոխությունը նախատեսված է ներածող-արտածող, ընդհանուր փոխանակային, բնական և արհեստական օդափոխության համակարգերով:

Կառուցապատման ընդհանուր ցուցանիշներն են.

Հողամասի ընդհանուր մակերես	3605.0քմ, որից՝
Նոր կառուցվող շենքի մակերես՝	1589.30քմ
Կանաչապատման մակերես՝	635.28քմ
Սիզամարգ՝	46.76քմ
Բարեկարգվող մակերես՝	1278.24քմ:

Դպրոցի տարածքում առկա կանաչապատ գոտին / 390.0 քմ մակերեսով տարածք, որը ներառում է դեկորատիվ ծառատեսակներ և սիզամարգ/, շինարարության հետևանքով որևէ ազդեցություն չի կրի: Նախագծով նախատեսված է աշխատանքների ավարտից հետո, կրթահամալիրի տարածքը բարեկարգվելու է, և համալրվելու է նոր կանաչապատ տարածքներով՝ 245.0մ² մակերեսով ծառատունկ, 47.0մ² մակերեսով սիզամարգ: Կանաչապատման համար անհրաժեշտ կլինի նոր բուսահողի լիցք: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է սոսի, կաղնի, գնդաձև ակացիա և հացենի: Նշված աշխատանքները համաձայնեցվել են Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից:



Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով: Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 24 ամիս: Հողային աշխատանքներից առաջացող ընդհանուր հանույթը կկազմի 1000մ³, որից 551.7 մ³-ը կօգտագործվի հետլիցքի նպատակով: Շինարարական բոլոր թափոնները, ներառյալ՝ մնացորդային գրունտը /448.30խմ ծավալով/, շինադրը և քանդված ասֆալտբետոնե ծածկույթը /115.08խմ ծավալով/ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված սահմանված կարգով կտեղափոխվեն համապատասխան աղբավայրեր:

Շինարարության ընթացքում կանխատեսվում է օդի աղտոտում՝ անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կառաջանան առկա շինության քանդման, նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներից և տեխնիկական միջոցներից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Քանդման 2950մ³ ընդհանուր զանգվածից փոշու գումարային արտանետումները հաշվարկվել են 0,067գ/վրկ, կամ 0.085 տ/շին.ժամանակահատված, իսկ հողային աշխատանքներից անօրգանական փոշու գումարային արտանետումները հաշվարկվել են 0,18գ/վրկ, կամ 0.37տ/շին.ժամանակահատված: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը նշված արտանետումները կլինեն ժամանակավոր: Արտանետումների նվազեցմանն ուղղված նախատեսվել են միջոցառումներ:

Շինարարական հրապարակում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ չի նախատեսվում: Շաղախը և բետոնը նախատեսված է շինհրապարակ բերել մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված բազաներում:

Շինարարական աշխատանքներից առաջացող քսայուղերը, հեղուկ վառելիքի մնացորդային քանակները պահեստավորվելու են հատուկ փակ տարաներում, հետագայում որպես երկրորդային նյութ, այլ աշխատանքներում օգտագործելու նպատակով:

Շինարարության ընթացքում ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են գործող ցանցերի միջոցով: Ջուրը նախատեսված է օգտագործել շինհրապարակի ջրցանման, մաքրման, շինարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև աշխատողների կենցաղային կարիքների համար: Շինարարական հրապարակի մակերեսներից մակերևութային ջրերի հեռացումն իրականացվելու է կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները պայմանավորված կլինեն հիմնականում երթևեկության ծանրաբեռնվածությամբ, շինարարական աղմուկի, թրթռումների, տարբեր տեսակի թափոնների առաջացմամբ, որոնց մեղմացման կամ կանխարգելման համար նախատեսվել են համապատասխան միջոցառումներ: Երթևեկության կառավարման համար նախատեսվող միջոցառումները ներառում են՝ ժամանակացույցի մշակում, ցուցանակների և նախազգուշացնող նշանների տեղադրում, շինհրապարակի ցանկապատում, ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ և այլն:

Հայտում ներկայացվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են՝ աշխատանքային անվտանգությանն ու աշխատողների առողջությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը և այլն:



Բոլոր բնապահպանական միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/ և ներառված են շինարարության նախահաշվի մեջ: Վերջիններիս իրականացման համար նախատեսված ծախսերը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1,2% -ը:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացված հանրային քննարկումներում նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին մասնակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, որի կողմից տրվել է համաձայնություն /համաձայնության վերաբերյալ 2019թ.-ի օգոստոսի 9-ի արձանագրության քաղվածքը ներառված է հայտում/:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ասքմեդ դիզայն» ՍՊԸ կողմից ներկայացված Հակոբ Կոջոյան թիվ 15 կրթահամալիրի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Մկրտչյան